**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 16 նոյեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Հասմիկ Հովհաննիսյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Հասմիկ Հովհաննիսյանը 2011թ. հոկտեմբերի 31-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթի եւ 201-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես, վերջինիս 1-ին, 3-րդ հոդվածների, 18-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 20-րդ հոդվածի 1-ին մասի, 23-րդ հոդվածի 3-րդ մասի, 27-րդ հոդվածի 2-րդ մասի, 43-րդ հոդվածի պահանջներին:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող իրավադրույթները հակասում են իրավական որոշակիության եւ իրավունքի գերակայության սահմանադրաիրավական սկզբունքներին, իսկ Եվրոպական կոնվենցիայի իմաստով «օրենք» համարվել չեն կարող: Նրա կարծիքով՝ քննության ենթակա նորմերը դատական ակտերում ստացել են այնպիսի կամայական մեկնաբանություն եւ կիրառություն, որով, ըստ էության, փոփոխվել է դրանց իրական իրավական իմաստը՝ դրանով իսկ խախտելով իր իրավունքները:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ դիմողի կողմից պահպանվել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով սահմանված ընդունելիության պայմանները, իսկ սույն դիմումն ըստ ձեւի համապատասխանում է օրենքով նախատեսված ընդհանուր պահանջներին, ուստի առկա չեն գործի քննությունը մերժելու՝ օրենքով ամրագրված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Քաղաքացի Համիկ Հովհաննիսյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության:
2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

16 նոյեմբերի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/2-15